

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐՊԻԱ

Մաչէք, խրուած հողագործներու շարքը, Սերպ-խրուած խնդրոյ լուծման համար կ'ուզէ որ 1918ին դառնան: Այս թուականին էր որ Բատիչ կը մարմնացներ իր մէջ ազգին բոլոր զգացումներն ու գաղափարականը: 1919ին Շ. Ռիւէի, «Թան» թղթակցին կը յայտարարէր. «Մենք բոլոր խրուածներս դաշնակցական ենք, և եթէ կեդրոնացման կը հակինք պարզ քաղաքացիութեան համար է...: Մեր աշխարհագրական դիրքին բերմամբ գէպի շունգարի միտումէն զմեզ հեռացնելու համար է պաշտօնական կառավարութեանց վարչութեան հակումը, որոնք, ինչ ալ ըսուի, միշտ Ասիոյ երկարացում մ'են. մեր պարտականութիւնն է ուրեմն, պաշտօններն եւրոպականացնել»:

Սակայն վճռական պահուն Պէլկրատի և Զաւկապրիոյ գաղտնի ուժեր խորտակեցին հազարամեան գերագահութիւնը խրուած ազգին, որոնց դէմ Բատիչ ուժգնօրէն արտայայտուեցաւ, նկատելով այսպիսիները աղետաբեր իր հայրենիքին: Դատուեցաւ, բանտարկուեցաւ, ազատեցաւ, գրեց, բողոքեց, հրապարակեց. նորէն բանտարկուեցաւ, ազատեցաւ, դարձեալ բողոքեց, և եթէ զիս ողջ ողջ թողնալ ալ, ըսաւ, անգլի աշխարհէն պիտի խռովեմ իրենց (սերպերու) խելքը:

Այս բողոքն է որ կը կրկնուի, այս ձայնն է որ խեղդել կ'ուզեն սերպերը: Ընկճուած Պէլկրատի ճնշումներէն, Բատիչ բռնի համակերպեցաւ փոխանակ դաշնակցական հանրապետութեան՝ ընդունել միապետական գրութիւնը: Այս զոհողութիւնը բարեկամութիւն մը պէտք է ստեղծէր Զաւկապրիոյ և Պէլկրատի միջեւ. սակայն սերպերը չըմբռնեցին որ Բատիչի հողագործական խումբը բոլորովին զատ և բարձր էր ուրիշ խմբակներէ: Թերեւս միայն լազար Մարքովիչ, Սերպիոյ Արդարութեան նախկին նախարար, և Ս. Ս. Ս. (S. H. S.) սկզբնապէս ռեւոլուցիոնէրները չըմբռնեցին որ այս միացող ժողովուրդներու հոգեբանական գրութիւնը որ նոր պետութեան տարբեր ուժերը միացնելով կը ստեղծէր Եւրոպական Սերպերը չհասկըցան ասիկա: Բատիչ միացաւ Բատիչի հետ արմատական խումբը զօրացնելու և անով իր ցեղին ու երկրին շահերը պաշտպանելու համար. սակայն իր յաջորդները իրենց ծեր պետին ոչ խորագիտութիւնն ունեցան և ոչ ալ քաղաքականութիւնը: Հետզհետէ կրքերը բռնացան, խորհրդարանէն ներս ու դուրս անկարգ և անպարկեշտ ցոյցեր դառաճանութեամբ մը վերջացան, և 20 Յունիս 1928ին խորհրդարանի նիստին սպաննուեցաւ Բատիչ, հետք չի թողու

Պողոս, Տոբ. Պատարիչէք, և ծանրապէս վերաւորուեցան Բեռնար և Կրանձիա:

Այս աղետալի արկածը բաւական է արդէն ցոյց տալու համար այս իրարու դաշնակից ազգերու հոգեբանութիւնը և վայրագութիւնը: Միեւնոյն աղէտն է որ մինչեւ այսօր կը շարունակուի սերպ ժողովուրդէն:

Բռնութիւնն ու ճնշումը բերաւ իրարու միացուց խրուած կուսակցութիւններու պետերը՝ Մաչէք, Թրուսիւիչ, Բրիւլիչէվիչ, Բաւելիչ և կազմուեցաւ միակ ճակատ Սերպիոյ դէմ: Սկսան հաւաքել թերթեր ու ցոյցեր: Այս անգամ միջամտեց Թադաւորը և զինուորական կառավարութիւն մը կազմեց:

Խրուած ժողովուրդը դո՛հացումի կը սպասէր իր ազգային արժանապատուութիւնը վերաւորուած զգալով: Իսկ Թադաւորը՝ գիտատորական վարչութեան գլուխ դրաւ Բ. Միւլիւիչը, որ 1903ի արքայապալանութեամբ Քարադէորդովիչները գաշը բարձրացուցած էր:

Դիկտատորական բռնութեանց հետ ծայր տուած հալածում մը որ հետզհետէ շարունակաբար սաստկացաւ ընդդէմ ակնառու անձերու և գիտնականներու, տարագրելով ու բանտարկելով խրուած պետերը՝ զորս անուանեցինք: Այս խտուածեանց դէմ կազմակերպուեցան ցոյցեր և գաղտնի ընկերութիւններ զորս նուաճելու համար դատուեցան Մաչէք և ուրիշներ, և օտարիկան մը՝ Նիքոլա Մուքիչ՝ երկաթէ լախնով մը կռնակէն զարկաւ և սպաննեց Միլան Շուֆֆան, Զաւկապրիոյ համալսարանին պատմութեան և իմաստասիրութեան աշխարհահռչակ ուսուցչապետը, որուն գէմ ընդվզեցաւ բոլոր քաղաքակիրթ աշխարհը:

Այսպէս խրուածներու անջատողական հոգին ալ աւելի օտարակցաւ և չորս տարուան բռնապետական ընկճումներէ վերջ, նորանոր եղեւնիներով կրկին ծայր տուաւ:

Մաչէք և իր հետ բոլոր իր ազգը 1918ի սկզբունքներով, դաշնակցական սկզբունքներով վրայ հիմնուած կառավարութիւն մը պահանջեցին: Յուզումները ցնցեցին եւրոպական պետութիւնները, և Անգլիոյ ակնառու պետեր Լորտ Նոէլ Պըքսթըն, Ճիւլիէր Բըրքէյ, Սելվըն Ուաթսըն եւն. Սերպիոյ արեւմտեան գաւառներէն վերագաղթած յարձակողական նամակ մը հրատարակեցին գործադրուած բռնութեանց և ճնշումներու դէմ, որոնք եւրոպական խաղաղութեան սպառնալիք մ'էին. և կը պահանջէին անգլիական պետութեան միջամտութիւնը, և հարցապնդումներ եղան խորհրդարանին մէջ: Ի պատասխան ներքին եւ արտաքին բողոքներու՝ կը ձերբակալուին ու

կը տարագրուին Քորոսէչ, Թրուսիւիչ, Մաչէք, Կաքսարովիչն ու կը բանտարկուին. և վեց ամսուան համար կը փակուին Զաւկապրիոյ և Լուպիանայի համալսարանները:

Այս առթիւ կառավարութիւնը խտացաւ մասնաւորապէս կաթողիկէներու դէմ, ազատութիւն և դաշնակցութիւն պահանջող երկու ազգերն ալ կաթողիկէ ըլլալով: Զաւկապրիոյ արքեպիսկոպոսարանը օստիկանական քննութիւն կատարուեցաւ: Արքեպիսկոպոսը օստիկանապետին առաջին այցելութիւնը մերժեց, որ երկրորդ անգամ Թադաւորական հրամանագրով ներս մտաւ: Ունայնաձեռն դուրս ելած չըլլալու համար՝ Արքեպիսկոպոսը անոր ձեռքը դրաւ Թադաւորէն ստացած շքանշանները՝ խընդրելով որ զանոնք իր վեհապետին վերագրանէ:

ՃԱՓՈՆ

Զափազանց հեռուն է, ըսեր էինք մենք նախապէս, Մայրաքոյն Արեւելքը, որպէսզի հոն պատահած գէպերուն աւելի հետաքրքրութեամբ մը հետեւենք. և մինչեւ որ ճափոնները չինական պարիսպներուն չմտեցան՝ լրագիրները սահմանափակ լուրերէն անգին չանցան: Մինչդեռ գործին բեղունութիւնն է որ դառնել պիտի տայ պատմական կարեւորութիւնը, և պատմութիւնը ցոյց պիտի տայ թէ որչափ չափազանց անուշագիր կերպով անցած է անտեսապէս և քաղաքականօրէն աշխարհս յեղաշրջող հսկայական պատերազմի մը վրայէն, ինչպէս է ներկայիս ճափոններու և Չինեթու միջեւ եղածը:

1931ի աշնան՝ ճափոնները հետզհետէ գրաւեցին Մուքէնը, Չանկ-Չունկ Մանչէական նոր պետութեան արդի մայրաքաղաքը և արեւմտեան երկաթուղւոյ ցանցի մասերուն իսկ գէպի արեւելք Չինու «Երեք Արեւելեան Դաւառներուն» Նայլունիքին, Քիւրին, Ֆէնկիթին: 1931-32 Նանկայի վրայ բուռն յարձակում մը միայն ըրին: 1933ին Ազգ. Ընկերակցութեան Յանձնաժողովը իր տեղեկագիրը վերջացուցած ատեն, ճափոններն ալ գրեթէ կը վերջանէին Մանչուրիոյ աշխարհակալութիւնը եւ մշտապէս դաշնակցութեան մը պայմանագրութիւնը կը կնքէին Մանչուրիոյ իրենց իսկ կազմած պետութեան հետ: Այս օրերուս ալ Նիւիտի Կիւրիէ վերջ մտան Շանհայ-Փուան որ այդ հողամասերուն բանալին է: Աւաղակներու աշունան տակ կամաւորներով սկսան ճափոնները և այսօր կանոնաւոր բանակներով կը հաստատուին:

Չինեթը ազգու բողոքագրով մը (29 Յունուար 1932) Ազգ. Ընկերակցութեան 15դ յօդուածին գործադրութիւնը պահանջեցին: - Այս յօդուածը Վեհաժողովին ամէնէն կարեւորներէն մին է: Ասոր ուրիշ գիմոյններ ալ եղած են, ինչպէս Յոյն Քորֆուի խնդրոյն մէջ:

Ընկերակցութեանն ու և է անգամ մը որ պատերազմի ելլէր «նովին իսկ գործով միւս բոլոր անդամներուն դէմ հրատարակած կ'ըլլար իր պատերազմը»: Նոր լուծում մը գտնելու հա-

մար տասնեկներու մասնաւոր յանձնաժողով մը կազմեցին. որ մինչեւ այսօր դեռ հնարք մը կը մտածէ սահմանափակուելով և 15դ յօդուածին առաջին երեք պարբերութիւններուն մէջ երկու ասիւլի կառարարները հաշտեցնելու: Հակառակ պարագային 15դ յօդուածի ամբողջական գործադրութեան համար պէտք է անցնել չորրորդին և վճռական դիրք մ'առնել. ասիկա ալ բոլորը կը զգուշանան՝ լի մտահոգութիւններով և քաղաքական ներքին պատճառներով: Ճափոնն ալ լաւ գիտէ թէ այսպիսի բան մը չի կրնար տեղի ունենալ, ի միջի այլոց նաեւ անոր համար որ համոզումն ունի թէ Մայրաքոյն Արեւելքի խնդիրները իրաւամբ թէ անիրաւ՝ իրեն վերապահուած են. և իր համոզման իբր ապացոյց աներկիւղ քաշուեցաւ Ազգ. Ընկերակցութեանէ:

Չինն ալ գիտակից անկարողութեանը, իրեն նպաստաւոր կացութիւն մը ստեղծելու համար՝ բոլոր յոյսը դրած է Միացեալ Նահանգներու և Խորհրդային Ռուսիոյ բարեկամութեան և շահագիտութիւններուն վրայ, որոնց երկուքն ալ ճափոնի անտեսա-քաղաքական մրցակիցներ են:

Ման-Չու ինքնին երկիր առատութեան կը նշանակէ. նաւարկելի գետեր, ոռոգելի դաշտեր, միայն երկու չափաւոր լեռնաշղթաներով մէկ միլիոն քառակ. հազարամեզր արարածութեամբ երկիր մը: Անասուն, անտառ, անուշիկ, երկաթ, ոսկի եւն., այս նոր ու մեծ պետութեան հարստութիւնը կը կազմեն: Բնական է թէ ճափոն իրեն անհրաժեշտ պէտքերուն գոհացում տալու համար՝ պէտք էր Եւրոպայի համար «անկախ» իսկ իրեն ճորտ պետութիւն մը ստեղծէր Մանչուրիոն:

Առ այժմ Չինաստանի մեծ պարիսպներուն տակ ճափոնի համար կը վերջանայ պատերազմն ու աշխարհակալութիւնը:

ԻՏԱԼԻԱ

Դադմախոյ ծովեզերքները - Արքիականի արեւելեան ափունքը - այցելողները գիտեն թէ այդ կողմերը քաղաքա-

կրթութեան եւ գեղարուեստի մնացորդները Հռովմէական կայսրութեան կամ Վենետիկեան Հասարակապետութեան են, և ասոնց աւերակներն ալ հոն արշաւող բարբարոսներու ձգած բնագործմը: Հետեւաբար Իտալիա՝ նախանձախնդիր իր անցեալ ու ներկայ փառքերուն՝ յուզումով տեսաւ և ուժգին կերպով բողոքեց երբ վեց վանդալներ Թրաուի քաղաքապետարանի ճակատը զարդարող Ս. Մարկոսեան առիւծը աւերելէ վերջ վերցուցին տեղէն: Սերպերը այսպէս ուղեցին ընդէ Վենետիկեան տիրակալութեան յուշարձան մ'ալ: Այս եւ նման վանդալութիւններ ամէն տեղ եղած են շնորք քաղաքական հովերուն համաձայն: Բայց Իտալիա յուզուեցաւ և շատ, որովհետեւ նշանա-ցոյցներն էին անոնք իր անցեալ և ապագայ իրաւունքներուն, որոնցմէ չ'ուզէր հրաժարիլ: Մերակոյտին մէջ գեղարուեստագէտ ատենակալ մը, Քորրաուոյ Ռեչչի, բողոքեց յանուն գեղ-

արուեստի, որուն պատասխանեց Մուսոլինի, պաշտպանելով իր ազգին սիրուն ու միտքը պատկերացնող ճառով մը: Եւ թիւ արձագանգ տուաւ Պեկրատէն՝ թէ սերպերը « թեւերնին խաչածեւած ու գլուխնին կախ չեն կեցած »:

Եւ իսկուհիա երես առած տղու մը դերն է որ կը կատարէ հիմա և Ֆրանսա զինք կը շփացնէ, կ'ըսեն: Այս խնդիրը դեռ չմարած, ահա ծագեցաւ Երրեակ փոքր զինակցութիւնը՝ Եւկոստաւիոյ, Ռուսմանիոյ և Չեխոսլովակիոյ միջեւ, որով երեք պետութիւններն ալ իրենց սահմանակից պետութիւններուն դէմ յարձակելու եւ պաշտպանութիւնը համար բոլոր ծրագիրներն ու զինարարները պատրաստած են ամէն տեսակ արդի ռազմանիւթերով և զէնքերով:

Ռուսմանիա Դեկտ. 15ին նորոգած էր իտալիոյ հետ իր բարեկամական դաշինքը՝ մինչեւ տարւոյս Յուլի 18ին համար և Կրթական նախարարին ներկայութեամբ Հռոմի մէջ կը հիմնուէր ռուսմանական ճեմարան մը: Ռուսմանիոյ իրենց պատմական անցեալով ու լեզուով իրենք զիրենք լատին ցեղին և Հռոմի կրտսեր քոյր ժողովուրդը կը դաւանին: Սակայն դաշնագրերու վերաբնութեան հարցը և համաշխարհային պատերազմով ձեռք ձգած երկրային առաւելութիւններէն չզրկուելու երկիւղը, կրկնէ կուտան իրեն պաշտպանեան և համաշխարհային պատերազմներուն խաղաղած դերը, կազմելով երրեակ փոքր համաձայնութիւն մը, զոր իտալիա կը նկատէ Ֆրանսայի առաջնորդութեամբ իր դէմ սարքուած զինակցութիւն մը:

ԵՐՐԵԱԿ ՓՈՔՐ

ՋԻՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Վերջին համաշխարհային պատերազմի կրակը պաշտպանութիւնը առաւ. յարգն ալ անկէ ծագելուն ապահովութիւնն ունենալու համար ահա կընտրած երրեակ փոքր-զինակցութիւն մը 18 - 20 Դեկտեմբերին՝ Եւկոստաւիոյ, Ռուսմանիոյ և Չեխոսլովակիոյ միջեւ, որպէսզի կարենան պահել, պաշտպանել եւ շարունակել իրենց անկախութիւնը: Հաստատ մնալու համար այս դաշինքին վրայ՝ տարին երեք անգամ պիտի հաւաքուին ժընեւի մէջ. դիւանատուն մ'ալ հաստատեցին Ազգաց Ընկերակցութեան կից: Դաշինքներու վերաբնութեան ստիպողական պահանջումները՝ ըլլայ իտալիոյ, ըլլայ Գերմանիոյ և կամ միւս զրկուած պետութեանց կողմէ, ստիպողական նկատել տուին այս միութիւնը: «Փոքր զինակցութիւնը ոչ օտարին դէմ, այլ ինքնիրեն համար կ'աշխատի, ըսաւ թիւթու լեպքուն»: Պենէս Պեկրատէն վերադարձին յայտարարեց թէ «միացած ներքստպէս» քաղաքական մէկ ծրագիր ունի և մէկ վախճան և թոյլ պիտի չտայ դաշնագրերու վերաբնութեան ոչ մէկ ծրագիր. և այս զինակցութիւնը բաւական ուժ ունի իր յատուկ քաղաքականութիւնը գործադրել տալու համար»: Ասոնց կը համաձայնի նաեւ Փոլոնիա որ ինքն ալ Տանցիկի մը վախն ունի սրտին մէջ. ասոնց համար պէտք է գոց

միան՝ ըսել կու տան յուշարար պետութիւնները, դաշնագրերու հատորները: - Այս առթիւ Ֆրանսացի քաղաքագետ մը կը յիշեցնէր Անգլիոյ թէ՛ համագործակցութիւն մը պէտք էր համազգային պատերազմի քաղաժ օգուտները չկորսնցնելու համար:

Ռուսմանիա վստահ է թէ Ֆրանսա և Եւրոպի խումբը ո՛ր և է տեսակ համաձայնութեան ալ գան խորհրդային կառավարութեան հետ, սակայն և այնպէս իր շահերը պիտի պաշտպանուին արեւելեան սահմաններուն վրայ: Ուրիշ քաջալերական կէտ մ'ալ որ ունի Ռուսմանիա, այդ ալ Կոմպէտի, Հունգար Դաշինքի նախագահին հանդէպ եղած խանդավառ ընդունելութիւնն էր իտալիոյ մէջ: Ռուսն արձագանգն եղաւ Մանիուի դաշինքին մէջ յայտարարութիւնը թէ Ռուսմանիա «ընդմիջում անբաժան է և պիտի մնայ իր սահմաններուն մէջ». և այսպէս խորհրդարանին նախագահը Փոփ, Արգարութեան նախարարը Բոքեւիչ արտայայտուեցան խանդավառ ճառերով՝ որոնք սովորաբար կ'արտասանուին խաղաղութեան ժամանակ երբ թնդաւ նոթները կը լռեն:

Պաշտպանել և միացնել փոքր տէրութիւնները՝ Դաղլիոյ տէրութեան պարտքն եղած է: Այս անգամ ալ այդ պարտականութիւնն է որ կը կատարէ, այս կերպով կանգնելու համար կեդրոնական չորս սիւներ լեհաստանով և պաշտպանեան այս տէրութիւններով, որպէսզի բարձր բռնեն իր փառքերու գմբէթը:

Պատմութեան նոր շրջան մը կը սկսի Գերմանիա, Հոնգրուլերեան արծուի թեւերուն տակ՝ աւանդական զինապաշտպանութեան կը ձգտի հոն ուր նպատակ դրած էր համաշխարհային պատերազմէն առաջ և չկրցաւ հասնիլ:

Իր ժողովրդեան համոզումն է, թէ Դաղլիա հասած է զուգորդի անկման շրջանին՝ ծնունդներու նուազութեամբ և բարոյական այլասերումով, ուստի իրն է տիրապետութեան իրաւունքը, որմէ ելմէ առաջ վրիպեցաւ՝ սակայն ատիկա ընկրկելու պատճառ մը չէր:

Հարկ էր ծայրէն սկսիլ ձեռնարկելով նախ ներքին վերակազմութեան, սրբելով մէջտեղէն կազմալուծող կուսակցութիւնները, որուն համար պատրաստուած էր Հիթլերի պողպատեայ սաղաւարտակիրներու բանակը:

Հոս՝ և Ֆրանսա զուգընթաց Յունուարի վերջին օրերուն սկսաւ նախարարական տագնապը. «Երկու երկիրներուն մէջ ալ խորհրդարանական մեքենան աւրուած է, կը գրէր «Թայմզ», եւ ո՛ր և է նախատեսութիւն դժուար է»: Մինչ Դաղլիա դեռ կը խորհարէ իր ուղին գտնելու համար, Գերմանիա լուծեց այնպիսի արագութեամբ և վճռականօրէն որ պատմական պիտի մնայ:

Յունուար 28ին Ֆոն Դալայիսը իր պաշտօնակիցներուն հետ խորհրդակցութեան մը վերջ՝ Հանրապետութեան նախագահին ներկայացուց

հրովարտակ մը լուծելու Բալխանիոյ՝ այն պարագային որ մերժէր վստահութեան բռնէն: Այս որոշումը արդիւնք էր Քէօնի մէջ Ֆոն Փափէնի և Հիթլերի տեսակցութեան, որու հետեւանքով նա խախտած կը զգար իր դիրքը: Հինամպուրկի բուն վստահութիւնը վայելողը Ֆոն Փափէնն էր և որուն յանձնեց նա նոր նախարարութեան մը կազմութեան խորհրդակցութիւնները. բայց կեդրոնական կուսակցութեան իր մեկնումը՝ զինքը տկարացուցէր էր: Երկու մեծ կուսակցութիւններու (ընկերվար-ազգային և գերման - ազգային) պետերը, Հիթլեր - Կէօրինկ - Ֆրեք և Հիւկենպերկ-Միթլ կը գումարուին Դալայիսի ժառանգութիւնը բաժնելու: «Արիթմ» Դալայիսի հրաժարականին կը կցէ «Մենք Հիթլերը կ'ուզենք» և այս կոչը իւղի պէս կը ծաւալի:

Ատոլի Հիթլեր նախարարապետ անուանուած էր, աշակղմեան ամէնէն ազդեցիկ անձերով կազմելով իր պաշտօնէութիւնը. այսպիսի արագ և վճռական լուծում մը նոյնպիսի գործունէութիւն մ'ալ ունեցաւ: Մարաշիստ Ֆոն Դալայիսի քաջուելուն՝ երկիւղ մ'ալ սփռուեցաւ զինուորական շարժման մը, բանակն իրեն չափազանց յարած ըլլալուն. զայն նուաճող մեծագոյն երկու ուժեր կային սակայն, կարգապահական ուժին եւ Հինամպուրկի դիւթիչ անուներ:

Եւրպետութիւնը՝ Հիթլեր Նախարարապետ, Ֆրեք՝ Ներքին Գործոց, և Կէօրինկ Բրուսիոյ ներքին գործոց եւն. ձեռք կ'առնէր կարեւոր պաշտօնէութիւնները, Ֆոն Փափէնի թողնով Բրուսիոյ մարզպանութիւնը:

Առ այժմ Գերմանիոյ սանձը ձեռքն առնելով Հիթլեր, հասած էր իր նախասահմանած նպատակին՝ հաւաքած փաշապաղ խաչով գրօշին տակ երիտասարդներու փաղանգ մը որ որոշ նպատակի մը կը հասնէր առանց ի զուր արիւն թափած ըլլալու:

Հիթլեր իշխանութեան բարձրանալուն՝ յայտարարեց թէ պիտի չչեղէր քաղաքական եւ վարչական այն սկզբունքներէն՝ որմէ ցարդ քալած և յառաջացած էր Գերմանիա. ուստի մնալով գերմանական դաշնակցութեան սկզբունքներ վրայ, իր գործը պիտի ըլլար զայն վերակազմել անտեսապէս և բարոյապէս «պահանջելով իրաւունքները և ապրելու համար կարեւոր շնորհակցութիւնը զարգացմամբ հին և բարձր աւանդութեամբ ժողովրդեան մը՝ ինչպիսին է Գերմանիա»:

Այսպէս պարզեց իր միջազգային քաղաքական ծրագիրը խալացի լրագրապետներու, որոնք նշանակալից առանձնաշնորհութեամբ մը առաջիններն էրան ունկնդրութիւն ունենալու:

Սպանացի լուսնիկը՝ քաղաքական ծանր յեղաշրջում մը առաջ բերող ուժը՝ համայնավարութիւնն էր. գերմանական արտածութեան ապրանք մը որ լենինի և Թրոցքի ձեռքով ուսու բանակին մէջ մտցուցած էր՝ զայն կազմալուծելու համար, և յաջողած էր իայց հիմա՝ իր երկրին մէջ՝ հարկ էր խեղդել: Ուստի

ոստիկանութեան օժանդակ և անոր հրամանատարութեան տակ՝ դրաւ իր սաղաւարտակիրները, մասնաւորապէս խորհրդարանային ընտրութեանց շրջանին կարգապահութեան համար:

Սկսան հսկել և խուզարկել համայնավարներու կեդրոնները և գրաւել ռազմամթերք, յայտագիր և ամբողջ զինարաններ՝ վերահաս յեղափոխութեան մը բոլոր նախապատրաստութիւններով:

Ձեռք առնուած ամէն միջոցներով չկրցաւ սակայն խափանել անոնց եղեւնիքն մաս մը և որոնց մեծագոյնը, խորհրդարանի հրկիզումը, որու խանձն ու մուխը սթափեցուց ժողովուրդը, վերահաս ընտրութեանց նախապատուութիւն տալու համար հայրենապէր խումբերուն:

Երջանիկ բարեբախտութեամբ մը Ֆրանսայի Ռուզուելթ մահափորձէ մը կ'ազատի - Միամիտ մէջ (Ֆլորիտա), ուր բարեկամի մը զբօսանալով շրջապատութեան գնացած էր - կնոջ մը արիասրտութեամբ՝ որ կը վրիպեցնէ ոճրագործին ձեռքը: Մահափորձողն էր Եոզեփ Դանկարա, խալացի անիշխանականը, որուն համար հաւասար էր սպաննել թագաւոր մը, Հուլիս և կամ Բուլգարի: Այս առթիւ ոստիկանութիւնը Ալ Գափոնէի աւազակներու խումբէն այլեւայլ անձեր ձերբակալեց, որոնց որը Ձերբակոն է և ուր Ձերմաք իւր քաղաքապետ խիստ հետապնդութեամբ մը խուճապի մատնած էր զասոնք: Այս մահափորձէն վերաւորուեցաւ Ձերմաք և հակառակ տարուած խնամքներուն մահուանէ չազատեցաւ:

Ներկայիս երկու մեծ աղէտներ կ'ահաբեկեն Ամերիկան. տնտեսական ճգնաժամը և աւազակներու վճռականները: Գինեհատութեան պատրուակով և մաքսանենգութեամբ անսահմանօրէն ընդարձակած աւազ այս գիւական կազմակերպութիւնը կը սարսափեցնէ ամերիկացիները որոնք մարդոց և մանուկներու առեւտնիքներն ու սպանութիւնները քստմունքով կը լսեն: Այդպէս ալ պէտք է ըլլար քաղաքակիրթ և կարգապահ երկրի մը համար, որպէսզի գրապէս գաղափար մը կազմելու հնարաւորութիւնն ու նենային թուրքիոյ մէջ հայերուս կրածներուն, որոնք իր ճամբած միսիոնարներէն խեղաթելուած կը հրատարակուէին հոն:

Միացեալ Նահանգներու տնտեսական ճգնաժամը շրջանաւոր երեւոյթ մ'է, արդիւնք՝ ճարտարարուեստի հսկայական գործարաններու և արտասովոր արտադրութեան, միջազգային մաքսային սեղմումներու, գործաւորական կազմակերպութեանց, որոնցմէ մեկուն իսկ սեղմուածով կամ խախտումով բոլորը միանգամայն կը ցնցուին: Ասոնց ալ արդիւնքն է գրամատուներու հետզհետէ և վիթխարի անանկութիւններու՝ ուսկից ազատելու համար ամենուն յոյսն ու վստահութիւնը Բուլգարի վրայ կեդրոնացած է: